| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | N 520 | *Տեսակը* | Մայր |
| *Տիպը* | Որոշում | *Կարգավիճակը* | Գործու |
| *Սկզբնաղբյուրը* | ԼՂՀՊՏ 2007.12.07/28(69) | *Ընդունման վայրը* | Ստեփա |
| *Ընդունող մարմինը* | ԼՂՀ կառավարություն | *Ընդունման ամսաթիվը* | 26.11.20 |
| *Ստորագրող մարմինը* | ԼՂՀ Վարչապետ | *Ստորագրման ամսաթիվը* | 26.11.20 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 17.12.2007 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ՝ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՄ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՄ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎՆ ՈՒ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6» նոյեմբերի 2007թ. N 5

ք.Ստեփանակերտ

## ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ՝ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՄ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՄ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎՆ ՈՒ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

1) օզոնային շերտը քայքայող նյութերի առաքման՝ ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման թույլտվության տրամադրման կարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.

2) օզոնային շերտը քայքայող նյութերի առաքման՝ ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման թույլտվության ձևը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ** **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված 1
ԼՂՀ կառավարության
2007թ. նոյեմբերի «26»-ի
թիվ 520 որոշման

### ԿԱՐԳ

### ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ՝ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՄ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՄ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են օզոնային շերտը քայքայող նյութերի առաքման՝ ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման թույլտվության (այսուհետ՝ առաքման թույլտվություն) տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Առաքման թույլտվություն ստանալու համար ներմուծողը կամ արտահանողը կամ տարանցիկ փոխադրողը (այսուհետ՝ հայտատու) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն

(այսուհետ՝ լիազոր պետական մարմին) է ներկայացնում առաքման թույլտվության տրամադրման հայտ՝ համաձայն ձևի:

3. Լիազոր պետական մարմինը հայտն ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում՝

1) եթե ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման տվյալ գործարքը համապատասխանում է «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջներին, ապա հայտատուին տրամադրում է առաքման թույլտվություն.

2) եթե ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման տվյալ գործարքն ունի «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով արգելված պայմաններ, կամ ներմուծողին տվյալ տարվա համար տրամադրված անհատական չափաքանակը (քվոտան) սպառվել է, ապա հայտի մերժման պատճառների մասին գրավոր տեղեկացնում է հայտատուին:

4. Առաքման թույլտվությունը կազմվում է 3 օրինակից: 2 օրինակը տրամադրվում է հայտատուին, իսկ մեկը պահվում լիազոր պետական մարմնում: Առաքումն իրականացնելիս՝ հայտատուն առաքման թույլտվության մեկ օրինակը հանձնում է մաքսային մարմին:

**ԼՂՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար** **Ս. Գրիգորյան**

Ձև

**ՀԱՅՏ**
***ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ***

______________________________________________

(հայտատուի տվյալները (կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը և բնակության վայրը)

Սույնով խնդրում եմ թույլատրել օզոնային շերտը քայքայող՝ ______________ ստորև նշված նյութերի

(ներմուծումը (արտահանումը), տարանցիկ փոխադրումը (նշել անհրաժեշտը)

1. Ընդամենը օզոնային շերտը քայքայող քիմիական նյութեր (մաքուր նյութի հաշվարկով)՝

| NN ը/կ | Օզոնային շերտը քայքայող նյութի՝ | | | | | Ներմուծման դեպքում՝ ներմուծման անհատական քվոտայի՝ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | քիմիական բանաձևը | միջազգային տեխնիկական անվանումը | առևտրային անվանումը | առաքվող քանակությունը (կգ) | համարը | տալու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը | մնացորդը՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (կգ) |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII |
| 1. | | | | | | | | |
| 2. | | | | | | | | |
| 3. | | | | | | | | |

2. Սույն հայտի 1-ին կետում նշված քանակության սահմաններում կառաքվեն օզոնային շերտը քայքայող՝ ստորև նշված մաքուր նյութերը և օզոնային շերտը քայքայող նյութերի խառնուրդները՝

ա. մաքուր տեսքով առաքվող օզոնային շերտը քայքայող նյութեր`

| N ը/կ | Օզոնային շերտը քայքայող նյութի` | | | | | Արտա-հանող երկրի անվանումը, իրավա-բանական անձի անվանումը, հասցեն կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն | Ներմուծող երկրի անվանումը, իրավա-բանական անձի անվանումը, հասցեն կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն | Տարանցիկ փոխադրման դեպքում` ներմուծման (արտա-հանման) մաքսային կետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | քիմիական բանաձևը | միջազգային տեխնի-կական անվանումը | առևտրային անվանումը | առաքվող քանակությունը (կգ) | | | |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII |
| 1. | | | | | | | | |
| 2. | | | | | | | | |
| 3. | | | | | | | | |

բ. առաքվող օզոնային շերտը քայքայող նյութերի խառնուրդներ`

| N ը/կ | Խառնուրդի` | | Խառնուրդում պարունակվող օզոնային շերտը քայքայող յուրաքանչյուր նյութի` | | | Արտահանող երկրի անվանումը, իրավա-բանական անձի անվանումը, հասցեն կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն | Ներմուծող երկրի անվանումը, իրավա-բանական անձի անվանումը, հասցեն կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն | Տարանցիկ փոխադրման դեպքում` ներմուծման (արտահանման) մաքսային կետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | առևտրային անվանումը | առաքվող ընդհանուր քանակու-թյունը (կգ) | միջազգային տեխնիկական անվանումը (և (կամ) քիմիական բանաձևը) | տեսա-կարար կշիռը (%) | քանակությունն առաքվող խառնուրդում (կգ) | | | |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII |
| 1. | | | 1) | | | | | |
| | | | 2) | | | | | |
| | | | 3) | | | | | |
| 2. | | | 1) | | | | | |
| | | | 2) | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 3) | | | | | |
| 3. | | | 1) | | | | | |
| | | | 2) | | | | | |
| | | | 3) | | | | | |

______________________________________________ (հայտատուի (լիազոր անձի) անունը, ազգանունը (պաշտոնը))

____________________ (ստորագրությունը)

Լիազոր պետական մարմնի նշումների համար

Հայտն ընդունված է 200 թվականի __________ -ի ______ -ին Կ.Տ

Հավելված 2
ԼՂՀ կառավարության
2007թ. նոյեմբերի «26»
թիվ 520 որոշման

Ձև

## ԱՌԱՔՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N - - - -

## ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՄ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՄ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ

_____________________________ սույնով թույլատրում է (լիազոր պետական մարմնի անվանումը) _________________ կողմից ստորև նշված օզոնային (հայտատուի անվանումը)

շերտը քայքայող նյութերի

_________________________________________________________________ (ներմուծումը (արտահանումը), տարանցիկ փոխադրումը (նշել անհրաժեշտը))

1. Մաքուր քիմիական նյութեր՝

| N N ը/ կ | Օզոնային շերտը քայքայող նյութի՝ | | | | | Արտահանող երկրի անվանումը, իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, | Ներմուծող երկրի անվանումը, իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունն | Տարանցիկ փոխադրման դեպքում՝ ներմուծման (արտահանման) մաքսային կետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | միջազգային տեխնիկական անվանումը | առևտրային անվանումը | ԱՏԳ ԱԱ* -ի ծածկագիրը | քանակը (կգ) | | | |

| | | | | | | բնակության վայրը | ը, բնակության վայրը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII |
| 1. | | | | | | | | |
| 2. | | | | | | | | |

2. Օզոնային շերտը քայքայող նյութեր պարունակող խառնուրդներ`

| N N ը/ կ | Օզոնային շերտը քայքայող նյութի խառնուրդի` | | | Խառնուրդում պարունակվող օզոնային շերտը քայքայող նյութերի` | | | Արտահանող երկրի անվանումը, իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը | Ներմուծող երկրի անվանումը, իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը | Տարանցիկ փոխադրման դեպքում` ներմուծման (արտահանման) մաքսային կետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | առևտրային անվանումը | ԱՏԳ ԱԱ -ի ծածկագիրը | քանակը (կգ) | միջազգային տեխնիկական անվանումը | տեսակարար կշիռը (%) | քանակը (կգ) | | | |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX |
| 1. | | | | 1) | | | | | |
| | | | | 2) | | | | | |
| | | | | 3) | | | | | |
| 2. | | | | 1) | | | | | |
| | | | | 2) | | | | | |
| | | | | 3) | | | | | |

Տրված է ______________________________
(ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)

________________________________ (լիազոր մարմնի ղեկավար)

____________________ (ստորագրությունը)

**Կ.Տ.**

* Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ

ԼՂՀ կառավարության
աշխատակազմի
ղեկավար-նախարար Ս. Գրիգորյան